

Հայերենի անվանական և բայական համակարգերի հոգնակիակերտ *-k'* մասնիկի ծագման վերաբերյալ գոյություն ունեցող կարծիքները շատ հակասական են: Նույնիսկ այն լեզվաբանները, որոնք առաջարկել են այդ հարցի նոր լուծումներ, ցուցաբերել են այնպիսի ղգուշություն, որ փաստորեն քիչ են նպաստում հարցի պարզաբանմանը: Ըստ էության, այս չափազանց կենսունակ ածանցի ծագման հարցը մինչև օրս մնում է վերջնականապես չլուծված:

\**-k'* մասնիկի ծագման վերաբերյալ առաջ քաշված կարծիքների մի մասը պոստ տրամաբանական եղրահանգման արդյունք է, մյուսները այն ավելի շատ կապում են համաբանության անսովոր պրոցեսների հետ: Հասար<sup>1</sup>, օրինակ առաջարկել է մի վարկած, ըստ որի *-k'* մասնիկը ինչ-որ ձևով ծագել է \**-w'es* բայի առաջին դեմքի հոգնակի մասնիկից և հնչյունաբանորեն նման է *k'san* < \**weskem* ձևին: Վան Վինդեկենսը<sup>2</sup>, զարգացնելով Յունկերի հնացած վարկածը<sup>3</sup>, առաջարկել է դրա ծագումը \**k<sup>w</sup>e-ից*՝ հավաքականի իմաստով, ինչպես հունարենի ὅς τε լատ. *quisque*: Ռայխենկրոնը<sup>4</sup> տեսնում է *-k'* մասնիկի եռաստիճան զարգացում, ճիշտ այնպես, ինչպես հունարենի \**-k-* մասնիկի զարգացումն է ՚ γοῦαῖξες (հայ. *kanayk'*)՝ *k<sup>w</sup>e* ձևից և այնպիսի երկակի թիվ ունեցող բառերից, ինչպիսիք են աչ<sup>5</sup> և ականջ բառերը<sup>5</sup>: Ջոլտան<sup>6</sup> *-k'*-ն համարում է հավաքական ածանց, մինչդեռ Գրեյը<sup>7</sup> իր հողվածում տալով հարցի պատմությունը, սկսած Բուգլիցից<sup>8</sup>, համարում է այն հավաքական մասնիկ, որում \**twom* ձևը ինչ-որ դեր է խաղացել, չնայած հեղինակը հաստատ համոզված չէ իր հայտնած կարծիքի ճշմարտության վերաբերյալ:

Ավանդական տեսակետով, որը կարծես նորից վերականգնվում ու վերահաստատվում է, այդ *-k'* ցուցիչը այսպես թե այնպես ծագում է ըստ կանոնավոր հնչյունական օրենքի հոգնակիակերտ \**-es* մասնիկից՝ միջանկյալ \**h-*ի անցումով, այսինքն՝ շնչեղացումով, որին ուղեկցում է շփական աղմուկը: Այս բավական դիպուկ դիտողությունը մերժվել է շատ վաղուց Հյուբշմանի<sup>9</sup> կող-

<sup>1</sup> O t t o H a a s. Das armenische Pluralzeich *-k'*.—*Հանդես ամսօրյա* 54, 1940, 96—106.

<sup>2</sup> A. J. v a n W i n d e k e n s. De Indo-Europeesche oorsprong van den meervoudsuitgang *-kh* in het Armenisch.—*Philologische Studien* (Louvain) 10, 1938—39, 92—95.

<sup>3</sup> Zeitschrift für vergleichende Sprachforschung 43, 1910, 339—340.

<sup>4</sup> G ü n t e r R e i c h e n k r o n. Armeniaca.—*Հանդես ամսօրյա* 75, 1961, 1021—1044, հատկապես 1034—1044.

<sup>5</sup> A k a n j - k ' - i մասին տե՛ս F. O. L i n d e m a n. Indo-European and Classical Armenian: a Phonological Note.—*Proceedings First International Conference on Armenian Linguistics* (J. Greppin, ed.). New York, 1980, 59—66.

<sup>6</sup> G e o r g R. S o l t a. Die armenische Sprache (Handbuch der Orientalistik I. 7. Armenisch und kaukasische Sprachen). Leiden, 1963, 80—128.

<sup>7</sup> L o u i s H. G r a y. The Armenian Plural Termination *-k'*.—*Transactions of the Philological Society* (London). 1947, 76—79.

<sup>8</sup> S o p h u s B u g g e. Beiträge zur etymologischen Erklärung der armenischen Sprache. Oslo, 1889, 43—44.

<sup>9</sup> H e i n r i c h H ü b s c h m a n n. Armenische Studien. Leipzig, 1884, 189.

մից (չնայած ինքը Հյուբերմանը միշտ հետևողականորեն պաշտպանել է \*sV-հայերենի hV- հնչյունափոխությունը<sup>10</sup>): Հյուբերմանի կարծիքը քանիցս հերքել են այնպիսի նշանավոր գիտնականներ, ինչպիսիք են Պեդերսենը<sup>11</sup>, Գրամոնը<sup>12</sup>, Մեյլեն<sup>13</sup>, Պիդանին<sup>14</sup>, Գոդելը<sup>15</sup> և Ջահուկյանը<sup>16</sup>:

Վերջերս մի նոր փորձ է արվել հոգուտ \*s > k' անցմանը \* - h -ի միջոցով: Ակադեմիկոս Ջահուկյանը իր «Сравнительная грамматика армянского языка» գրքում<sup>17</sup> մեջ է բերում Արեղեանի<sup>18</sup> տեղանունը<sup>19</sup>, որը ծագում է ուրարտական Abelian/ihi տեղանունից: Այսպիսով ուրարտական տեղանունը Արեղեանի -h ուղիղ նախածին է, և մի նոր ապացույց \* - hi < \* - s > - k' անցման:

Սակայն այս կարծիքը, որի համաձայն h-ի մի տեսակը տվել է հայերենի -k'-ն, հակասում է անատոլիական փոխառություններում գործող և լայնորեն տարածված ու ապացուցված h > x (խ) հնչյունափոխությանը: Օրինակ՝ խուռ. hlnzuri խնձորենի հայ. խնձոր, խոտ. mañri ծառի մի անասկ հայ. մախր (եղևիկ), խեթ. hllbuliya կոիվ. պայքար հայ. խողխողեմ, խեթ. GİSlahhura- (արևաշառ բույս) հայ. լախուր «մաղդանոս»: Թեև չկան բառավերջի -h-ով փոխառություններ<sup>20</sup>, սակայն հիմք չկա ենթադրելու, որ խեթերենի կամ խուռերենի բառավերջի h-ն այլ ձևով կարտացոլվեր հայերենում, քան բառակերպի կամ բառամիջի x (խ) (< h )-ով:

Կարելի է հոգնակիակերտ -k' մասնիկի նախնական ձևը փորձել գտնել նույն համակարգի այլ ձևերում՝ այն նոր ծագած հավաքական ցուցիչի մեջ, որը նման է -նի (երկրցնի), -եան (Արեղեան, Կովեան) կամ -եար (վարժեար) ձևերին, կամ էլ փորձել բացատրել այն սուբստրատային փոխառություններով:

<sup>10</sup> Բառակերպ \* sV- > \* h հնչյունափոխությունը սահմանափակվել է \*se- կամ \*sj- կապակցությամբ (John A. C. Greppin. Does IE\* sV- give Arm. hV-.—Zeitschrift für vergleichende Sprachforschung 89, 1975, 46 - 52); վերջերս Ֆրեդերիկ Կորտլանդը կրճատեց այդ անցումը՝ սահմանափակելով այն \*si-ով, այսպիսով լուծելով ևս մի չլուսաբանված երևի հարցը (Notes on Armenian Historical Phonology III: h.—Studia Caucasica 5, 1982).

<sup>11</sup> Holger Pedersen. Zur armenischen Sprachgeschichte.—Zeitschrift für vergleichende Sprachforschung 38, 1905, 194—240 (=Kleine Schriften zum Armenischen. Hildesheim, 1982, 56—102).

<sup>12</sup> M. Grammont. Notes de phonétique générale VI. Arménien classique.—Memoires de la Société Linguistique (Paris) 20, 1918, 213—259, հատկապես 227—229.

<sup>13</sup> A. Meillet. Esquisse d'une grammaire de l'arménien classique. Vienne, 1936, 69—70.

<sup>14</sup> V. Pisani. Studi sulla fonetica dell'armeno (continuazione).—Ricerche linguistiche 2, 1951, 47—74, հատկապես 66.

<sup>15</sup> Robert Godel. Diachronic Armenian.—In: Current Trends in Linguistics, vol. 6 (Thomas A. Sebeok, ed.). The Hague, 1970, 139—159, հատկապես 148—149.

<sup>16</sup> Г. Б. Джаукян. Очерки по истории дописьменного периода армянского языка. Ереван, 1967, 243; Он же. Общее и армянское языкознание. Ереван, 1978, 65.

<sup>17</sup> Г. Б. Джаукян. Сравнительная грамматика армянского языка. Ереван, 1982, 39.

<sup>18</sup> Vlad Banateanu. Beiträge zur der urartischen Ortsnamen in der armenischen Toponymie.—«Հանդես ամսօրյա» 1961, 1052—1078, հատկապես 1063.

<sup>19</sup> Heinrich Hübschmann. Die altarmenische Ortsnamen. Strassburg, 1904, 363, 393.

<sup>20</sup> Հայերեն զախախ բառը իսկապես կարող է ծագած լինել խեթ. Zāhhiḫa- ձևից (Нерсес Мкртчян. Редупликация глаголов в хеттском и армянском.—Древний Восток 2, 1976, 76—85, հատկապես 84), բայց այս դեպքում հնչյունափոխությունը մի քիչ անսովոր է:

Համենայն դեպս մենք չենք կարող բխեցնել այն հնդեվրոպական \*-s ցուցիչից, եթե չգտնենք մի այլ փոխանցման ուղի, քան միջանկյալ \*-h -ն է:

Գողելը<sup>21</sup> դտնում է. որ \*-s>-k' հնչյունափոխությունը անհամանական է, հատկապես նկատի ունենալով եզակի \*os>հայերեն Օ հնչյունափոխությունը (\*mɛlos>marđ): Կ' ձևույթը, ըստ Գողելի, դրսևորվում է զերազանցապես որպես հոլովական վերջավորություն և ոչ որպես համարայան ածանց: Մեյեն<sup>22</sup> ժխտում է, թե -k'-ն ծագում է վերջահար մասնիկից, իսկ Շմիդտը<sup>23</sup>, ինչպես էլ չունի է կերուան<sup>24</sup>, բավականին համոզիչ վարկած է առաջ քաշում, որի համաձայն այն կրում է սուբստրատային ազդեցություն (սակայն այդ մասնիկի գործածությունը գոյականի և բայի համակարգերում թերևս բացառվում է հնդեվրոպականում):

О ПЕРЕХОДЕ КОНЕЧНОГО \*-s>\*-h>-k' В АРМЯНСКОМ

Джон А. К. ГРЕППИН (США)

Резюме

Многие лингвисты делали попытку объяснить происхождение показателя множественного числа -k' в армянском языке. Недавно предпринятая попытка возвести его к урартскому h кажется маловероятной, так как в урартских заимствованных армянского языка h регулярно отражается фонемой x (խ); поэтому соответственно урартского h армянскому k' в урартском топониме Abiliane/ihi—арм. Abeteank' является иллюзорным.

<sup>21</sup> Robert Godel. An Introduction to the Study of Classical Armenian. Wiesbaden, 1975, 102.

<sup>22</sup> նույն տեղում, 70:

<sup>23</sup> Rüdiger Schmitt. Die Erforschung des Klassisch-Armenischen seit Meillet (1936).—Kratylos 17, 1972 [1974], 1—68, հատկապես 15—16. Մինչև Շմիդտի ուսումնասիրության յուրս տեսնելը չեղմաբանները հենվում էին ղլխավորապես վերներ վիստերի (Evidence for Laryngeals, pp. 104—105) կարծիքի վրա, որով -k'-ի առաջացման հիմնական աղբյուրը կապվում է -VHS կապակցության հետ: Սրա վերաբերյալ դրսողություններ են արվել Ջ. Գրեպինի կողմից (On the Development of Armenian mukn and jukn.—Revue des études arméniennes 8, 1971, 1—4; Eric Hamp. „Fish“.—Journal of Indo-European Studies 1, 1973, 507—511; Heiner Eichner. Die urindogermanische Wurzel \*H<sub>2</sub>reu- 'hell machen'.—Die Sprache 24, 144—162, հատկապես 152).

<sup>24</sup> Maurice Leroy. Les Arméniens, leur langue et leur littérature.—Annuaire de l'Institut de Philologie et d'histoire Orientales et Slaves 17, 1963—1965, 5—14, հատկապես 8.